ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

13 նոյեմբերի 2024 թվականի քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան՝ հետեւյալ կազմով.

նախագահող՝ դատարանի նախագահ Ա.Ա. Դրոնովի, զեկուցող դատավոր՝ Ա.Ա. Զաբարայի, դատավորներ՝ Ա.Մ. Աժիբրահիմովայի, Է.Վ. Հայրիյանի, Դ.Պ. Ալեքսանդրովի, Ե.Ժ. Իսմայիլովի, Մ.Տ. Կայիպովի, Ա.Բ. Կիշկեմբաեւի, Ն.Վ. Պավլովայի, Ա.Գ. Թունյանի,

քարտուղարությամբ՝ Մ.Ա. Նաումչիկի,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 68-րդ, 69-րդ, 96-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 14-րդ, 72-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է խորհրդատվական եզրակացություն՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթների պարզաբանման մասին Ղազախստանի Հանրապետության՝ ի դեմս Ղազախստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության ու զարգացման հարցերով գործակալության, դիմումի հիման վրա։

I. Դիմումատուի հարցերը

1. Ղազախստանի Հանրապետությունը՝ ի դեմս Ղազախստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության ու զարգացման հարցերով գործակալության, դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) դրույթների պարզաբանման մասին դիմումով։

Դատարանի մեծ կոլեգիայի 2024 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ՝ պարզաբանման մասին դիմումն ընդունվել է վարույթ հետեւյալ հարցերի մասով.

- արդյո՞ք Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն, ԵԱՏՄ) իրավունքին համապատասխան, օժտված է մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնման մենաշնորհային բարձր գին սահմանելու լիազորություններով, թե Պայմանագրի 76-րդ հոդվածի դրույթները բացառապես վերաբերում են ապրանքային շուկայում մենաշնորհային բարձր գին սահմանելուն, ապահովելուն՝ բացառելով գնումները,

- արդյո՞ք, Միության իրավունքի համաձայն, «գնումները» կարող են ճանաչվել որպես «ապրանքային շուկա»։

2. Հիմնվելով Պայմանագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետի եւ 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի (Պայմանագրի թիվ 2 հավելված, այսուհետ՝ Դատարանի ստատուտ) «Դատարանի իրավասությունը» գլուխ IV-ի, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության Դատարանի կանոնակարգի (այսուհետ՝ Դատարանի կանոնակարգ) 10-րդ եւ 73-րդ հոդվածների դրույթների համակարգային մեկնաբանության վրա՝ Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Դատարանն օժտված

է Միության իրավունքի միայն այն դրույթները պարզաբանելու լիազորություններով, որոնք Պայմանագրով եւ ԵԱՏՄ շրջանակներում միջազգային պայմանագրերով վերապահված են նրա իրավասությանը։

Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ Միության իրավունքի նորմերի միատեսակ կիրառությունն ապահովելուն (Դատարանի ստատուտի 2-րդ կետ) ուղղված Դատարանի գործունեության նպատակին հասնելու համար Դատարանի խորհրդատվական եզրակացության մեջ դիմումատուի հարցերին պատասխանները կարող են մեկնաբանվել այնպես եւ այն կարգով, որպեսզի հնարավոր լինի լիովին պարզաբանել Պայմանագրի, Միության շրջանակներում միջազգային պայմանագրերի համապատասխան դրույթները եւ Միության մարմինների որոշումները։

Հաշվի առնելով դիմումատուի հարցերի բովանդակությունը, դրանց տրամաբանությունը եւ փոխադարձ կապը, դրանց պատասխանելու համար սույն գործի շրջանակներում ենթակա է հետազոտության հետեւյալը՝

- առաջին հերթին՝ «ապրանքային շուկա» եւ «գնումներ» հասկացությունների հարաբերակցությունը, որոնց սահմանումները տրված են «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 19 հավելված) 2-րդ կետի 19-րդ ենթակետում եւ «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 25 հավելված) 2-րդ կետի չորրորդ պարբերության մեջ՝ համապատասխանաբար.

- երկրորդ հերթին՝ Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ Մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխման հարցերով հանձնաժողովի լիազորությունների ծավալը, այդ թվում՝ պետական (մունիցիպալ) գնումների միջոցով ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերման մասով, ներառյալ մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) գնումները։

Այսպիսով, սույն գործով պարզաբանման են ենթակա Պայմանագրի 76-րդ

հոդվածի, «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության 2-րդ կետի 19-րդ ենթակետի, «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության 2-րդ կետի չորրորդ պարբերության դրույթները։

3. Դատարանի կանոնակարգի 75-րդ հոդվածի կարգով գործը քննության նախապատրաստելու շրջանակներում՝ դիմումատուի առաջադրված հարցերի վերաբերյալ պահանջվել են լրացուցիչ տեղեկություններ եւ բարձրագույն դատական ատյանների ու անդամ պետությունների պետական այն մարմինների կարծիքները, որոնց իրավասությանն է վերապահված մրցակցային (հակամենաշնորհային) քաղաքականության իրականացումը, գնումների ոլորտում կարգավորումն ու վերահսկողությունը, ինչպես նաեւ Հանձնաժողովի՝ որպես Միության մշտապես գործող կարգավորող մարմին, դիրքորոշումը։

Համապատասխան տեղեկատվությունը Դատարանին է տրամադրել Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը, Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, Բելառուսի Հանրապետության Գերագույն դատարանը, Բելառուսի Հանրապետության հակամենաշնորհային կարգավորման եւ առեւտրի նախարարությունը, Ղազախստանի Հանրապետության դատական վարչակազմը, Ղրղզստանի Հանրապետության Գերագույն դատարանը, Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Ղրղզստանի Հանրապետության էկոնոմիկայի եւ առեւտրի նախարարությանն առընթեր հակամենաշնորհային կարգավորման ծառայությունը, Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանը, Ռուսաստանի Դաշնության Գլխավոր դատախազությունը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովը։

II. Դատարանի եզրահանգումները

4. Առաջնորդվելով Դատարանի ստատուտի 50-րդ կետով՝ Դատարանի մեծ կոլեգիան, արդարադատություն իրականացնելիս, այդ թվում՝ Պայմանագրի դրույթները պարզաբանելիս, կիրառում է միջազգային իրավունքի համընդհանուր

ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը, Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերը, Միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները, միջազգային սովորույթը՝ որպես համընդհանուր գործելակերպի ապացույց, որը ճանաչված է որպես իրավական նորմ։

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի «Մեկնաբանման ընդհանուր կանոնը» 31-րդ հոդվածին համապատասխան՝ միջազգային պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաեւ հաշվի առնելով պայմանագրի օբյեկտը եւ նպատակները։

5. «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով հիմնադրվել է Միությունը, որը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է (Պայմանագրի 1-ին հոդված)։

Պայմանագրի 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Միությունն օժտվում է իրավասությամբ՝ սույն Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում եւ ծավալներով։ Բացառապես նշված սահմաններում են նրա մարմինները կարգավորում շուկայում մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների, ինչպես նաեւ պետական (մունիցիպալ) գնումների վերաբերյալ հարցերը։

Այսպես, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված) 3-րդ կետին համապատասխան, Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված լիազորությունների սահմաններում՝ ներառյալ այնպիսի ոլորտները, ինչպիսիք են մրցակցային քաղաքականությունը (ենթակետ 9) ու պետական եւ (կամ) մունիցիպալ գնումները

(ենթակետ 13)։

Պայմանագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ Միությունն իր գործունեությունն իրականացնում է անդամ պետությունների կողմից սույն Պայմանագրին համապատասխան իրեն վերապահվող իրավասության շրջանակներում՝ տվյալ հոդվածով սահմանված սկզբունքների հիման վրա։ Այդ սկզբունքների հիման վրա էլ գործում են Միության մարմինները (Պայմանագրի 8-րդ հոդվածի 3-րդ կետ)։

Ըստ Պայմանագրի 3-րդ կետի՝ ԵԱՏՄ իրավասությանը վերապահված՝ համապարփակ բնույթի եւ տնտեսության ոլորտներում տարբեր հարաբերությունների համակարգային իրավական կարգավորում ապահովող հիմնական սկզբունքների թվին դասվում են շուկայական տնտեսության եւ բարեխիղճ մրցակցության սկզբունքները։

Շուկայական տնտեսության եւ բարեխիղճ մրցակցության սկզբունքների պահպանումը ԵԱՏՄ տարածքում եվրասիական տնտեսական ինտեգրման հետագա զարգացման, անդամ պետությունների տնտեսությունների ամրապնդման, դրանց ներդաշնակ զարգացման եւ մոտարկման պարտադիր պայմաններից մեկն է։ Ընդ որում, բարեխիղճ մրցակցության սկզբունքը սերտորեն փոխկապված է Պայմանագրի 4-րդ հոդվածում թվարկված նպատակներից յուրաքանչյուրի հետ՝ անդամ պետությունների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը՝ ի նպաստ դրանց բնակչության կենսամակարդակի բարձրացման շահերի, Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի միասնական շուկա ձեւավորելու ձգտումը, համաշխարհային տնտեսության պայմաններում բազմակողմանի արդիականացումը, համագործակցությունը եւ ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացումը։

Պետական (մունիցիպալ) գնումների կարգավորման մասով այդ մոտեցումը Միության իրավունքի մակարդակով ամրագրված է Պայմանագրի 88-րդ հոդվածի 1-ին կետի տասներորդ պարբերության մեջ, որին համապատասխան՝ մրցակցության զարգացումը դասվում է նշված հարաբերությունների կարգավորման

նպատակներին եւ սկզբունքներին։

Հաշվի առնելով միջազգային պայմանագրի մեկնաբանման ընդհանուր կանոնը՝ Դատարանի մեծ կոլեգիան, պայմանավորված նրանով, որ Պայմանագրի պարզաբանումը, ինչի մասին խնդրում է դիմումատուն, պետք է իրականացվի դրա դրույթների համակարգային փոխկապակցվածության մեջ, դրանց համատեքստում, ինչպես նաեւ հաշվի առնելով Պայմանագրի օբյեկտը եւ նպատակները։

Պայմանագրի 3-րդ հոդվածի, գլուխներ XVIII եւ XXII դրույթները մատնացույց են անում, որ շուկայական տնտեսության եւ բարեխիղճ մրցակցության սկզբունքները ձեւավորում են ինչպես մրցակցության ընդհանուր կանոնների, այնպես էլ գնումների իրավական բազա։

6. Ապրանքային շուկաներում մրցակցային (հակամենաշնորհային) իրավունքի գործողության, այն հարաբերությունների մասին, որոնք, ի թիվս այլի, ընդգրկում են պետական (մունիցիպալ) գնումները, նշում են նաեւ անդամ պետությունների մարմինները՝ սույն գործի վերաբերյալ Դատարանի հարցումներին տված իրենց պատասխաններում (Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 010109, Բելառուսի Հանրապետության հակամենաշնորհային կարգավորման եւ առեւտրի նախարարության 2024 թվականի օգոստոսի 20-ի թիվ 14-01-08/1586 K, Ղրղզստանի Հանրապետության էկոնոմիկայի եւ առեւտրի նախարարությանն առընթեր հակամենաշնորհային կարգավորման ծառայության 2024 թվականի օգոստոսի 29-ի թիվ 07-2/1770, Ռուսաստանի Դաշնության Գլխավոր դատախազության 2024 թվականի օգոստոսի 30-ի թիվ 91/1-488-24 գրություններ)։

Համաձայն նրանց դիրքորոշման՝ ըստ ընդհանուր կանոնի, մենաշնորհային գործունեության հակազդման եւ մրցակցության զարգացման մասին անդամ պետությունների օրենսդրության նորմերն ուղղված են ապահովելու մրցակցության զարգացումը եւ գործում են բոլոր ապրանքային շուկաներում, որտեղ ապրանքների վաճառքի (ձեռքբերման) գործարքներ են կատարվում, այդ թվում նաեւ՝ պետական

գնումների միջոցով։ Տվյալ նորմերը կիրառվում են ամբողջությամբ, առանց բացառումների եւ սահմանափակումների՝ չնայած մրցակցության եւ գնումների իրավական կարգավորման տարբեր առարկաների։

7. Այսպիսով, մրցակցային (հակամենաշնորհային) քաղաքականությունը եւ պետական (մունիցիպալ) գնումները Պայմանագրով կարգավորվում են այդ թվում՝ Պայմանագրով սահմանված՝ շուկայական տնտեսության եւ բարեխիղճ մրցակցության սկզբունքների հիման վրա։ Տվյալ սկզբունքների գործողությամբ սահմանվում է ուսումնասիրվող հարաբերությունների իրավական կարգավորման համակարգային փոխկապակցվածությունը։

Ընդ որում, Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ դիմումատուի հարցերից ելնելով, սույն գործի վերաբերյալ անհրաժեշտ է պարզաբանել Հանձնաժողովի վերահսկողական լիազորությունները հատկապես մրցակցության ոլորտում։ Իսկ դիմումատուն հարցումով չի պահանջում պարզաբանել՝ պետական (մունիցիպալ) գնումների վերաբերյալ Միության իրավունքի պահպանման ապահովման մասով Հանձնաժողովի վերահսկողական լիազորությունների մասին Պայմանագրի դրույթները։

Դատարանի մեծ կոլեգիան միեւնույն ժամանակ ուշադրություն է դարձնում, որ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունն ապահովում է նրա լիազորված մարմինը (Պայմանագրի 88-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ եւ երրորդ պարբերություններ)։

«Ապրանքային շուկա» եւ «գնումներ» հասկացությունների հարաբերակցության մասին

8. «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 19 հավելված) 2-րդ կետի 19-րդ ենթակետը «ապրանքային շուկան» սահմանում է որպես այն ապրանքի շրջանառության ոլորտ, որը չի կարող փոխարինվել այլ ապրանքով, կամ փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ, որի սահմաններում, (այդ թվում՝ աշխարհագրական), ելնելով տնտեսական, տեխնիկական կամ այլ հնարավորությունից կամ նպատակահարմարությունից, գնորդը կարող է ձեռք բերել ապրանք, եւ որի սահմաններից դուրս նման հնարավորությունը կամ նպատակահարմարությունը բացակայում է:

Նման հանգամանքներում ապրանքային շուկայի վիճակը, այնտեղ ձեւավորված պայմանները ստեղծում են այդ շուկայում ապրանք ձեռք բերելու պայմաններ:

Իր հերթին, «ապրանքը» սահմանվում է որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ (այդ թվում՝ աշխատանք, ծառայություն՝ ներառյալ ֆինանսական ծառայությունը), որը նախատեսված է վաճառքի, փոխանակման կամ այլ ձեւով շրջանառության մեջ դնելու համար («Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության 2-րդ կետի 18-րդ ենթակետ):

«Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 25 հավելված) 2-րդ կետի չորրորդ պարբերության համաձայն, «գնումներ» եզրույթը ենթադրում է պետական (մունիցիպալ) գնումները, որոնց ներքո հասկացվում են պատվիրատուների կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերումը եւ այլ գնումներ՝ բյուջետային միջոցների, ինչպես նաեւ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում, այլ միջոցների հաշվին, ինչպես նաեւ գնման պայմանագրերի կատարման հետ կապված հարաբերություններ:

Ընդ որում, «պատվիրատու» եզրույթի ներքո հասկացվում է պետական մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինը, բյուջետային կազմակերպությունը (այդ թվում՝ պետական (մունիցիպալ) հաստատությունները), ինչպես նաեւ, անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում, անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն գնումներ իրականացնող այլ անձինք («Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության 2-րդ կետի երրորդ պարբերություն)։

9. Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 19 հավելված) 2-րդ կետի առաջին պարբերության դրույթներին համապատասխան, «ապրանքային շուկա» հասկացության սահմանումը տրված է սույն արձանագրության եւ Պայմանագրի «Մրցակցության ընդհանուր սկզբունքները եւ կանոնները» XVIII բաժնի նպատակների համար։

Պայմանագրի XVIII բաժնի առարկան է՝ անդամ պետությունների տարածքներում հակամրցակցային գործողությունների, ինչպես նաեւ երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա բացասաբար ազդող գործողությունների հայտնաբերումն ու կանխումն ապահովող՝ մրցակցության ընդհանուր սկզբունքներ ու կանոններ սահմանելն է (Պայմանագրի 74-րդ հոդվածի 1-ին կետ)։

«Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրությունը մշակվել է Պայմանագրի XVIII բաժնին համապատասխան, որով սահմանվում են Պայմանագրի նշված բաժինը կիրառելու առանձնահատկությունները, երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներում անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման համար նշանակվող տուգանային պատասխանատվության միջոցները, Հանձնաժողովի կողմից անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ

վերահսկողություն իրականացնելու կարգը (ներառյալ անդամ պետությունների լիազորված մարմինների հետ փոխգործակցությունը), մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս անդամ պետությունների լիազորված մարմինների փոխգործակցության կարգը, ինչպես նաեւ գների պետական կարգավորում սահմանելու եւ այն սահմանելու մասին անդամ պետությունների որոշումները բողոքարկելու կարգը։

«Գնումներ» հասկացության սահմանումը շարադրված է «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 25 հավելված) 2-րդ կետում՝ ինչը պայմանավորված է տվյալ արձանագրության մեջ եւ Պայմանագրի «Պետական (մունիցիպալ) գնումներ» XXII բաժնում՝ դրա կիրառմամբ։

Ըստ Դատարանի մեծ կոլեգիայի՝ այն հանգամանքը, որ «ապրանքային շուկա», «ապրանք», «գնումներ» հասկացությունների սահմանումները ներկայացված են Պայմանագրի տարբեր բաժիններում եւ հավելվածներում, որոնց կարգավորման առարկան տարբեր է, խոչընդոտ չէ՝ դրանք համեմատելու եւ համեմատական վերլուծություն կատարելու համար, քանի որ Պայմանագրի 6-րդ հոդվածին համապատասխան՝ Միության իրավունքը միասնական համակարգ է եւ, կարգավորման որոշ ոլորտների առնչությամբ հատուկ ցուցումների բացակայության դեպքում, Միության իրավունքի ակտերում գործածվող հասկացությունները եւ եզրույթները պետք է միասնական իմաստով կիրառվեն։

10. «Ապրանքային շուկա» եւ «գնումներ» հասկացությունների բովանդակության վերլուծությունը դրանց համադրությամբ թույլ է տալիս Դատարանի մեծ կոլեգիային հանգել այն եզրակացության, որ երկու հասկացություններն իրար նկատմամբ հարաբերակցվում են հասկացությունների ընդհանուր կատեգորիայի միջոցով՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերում։

Ելնելով հասկացության բովանդակությունից՝ «ապրանքային շուկան» ապրանքի շրջանառության ոլորտ է, որի սահմաններում ապրանքը կարող է ձեռք բերվել, եւ այդ հնարավորությունը կամ նպատակահարմարությունը բացակայում է դրա սահմաններից դուրս, իսկ «գնումները» այդ ապրանքի ձեռքբերման եղանակներից մեկն է։

Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 19 հավելված) 2-րդ կետի 19-րդ ենթակետում «ապրանքային շուկա» հասկացությունը բացելիս «գնորդ» եզրույթը պետք է մեկնաբանել սովորական իմաստով՝ որպես ցանկացած անձ, որը ձեռք է բերել ապրանք, քանի որ Պայմանագրի բովանդակությունից չի բխում այն, որ մասնակից պետությունները տվյալ եզրույթին հատուկ իմաստ տալու մտադրություն ունեն։ Պայմանագրի համատեքստում տվյալ եզրույթն իր իմաստային նշանակությամբ ավելի լայն է «պատվիրատու» եզրույթից, ինչպես այն սահմանվում եւ գործածվում է «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 25 հավելված) 2-րդ կետի երրորդ եւ չորրորդ պարբերությունների մեջ։ Ընդ որում, «գնորդ» եզրույթի բովանդակությունն ընդգրկում է, այդ թվում՝ պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, բյուջետային կազմակերպությունները, ինչպես նաեւ այլ անձանց, որոնք ապրանքները ձեռք են բերում գնումների միջոցով։

Նաեւ Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ ապրանք ձեռք բերելը, որի մասին է խոսքը «ապրանքային շուկա» հասկացության սահմանման մեջ, չի սահմանափակվում միայն բյուջետային եւ «գնումներ» հասկացության սահմանման մեջ նախատեսված այլ միջոցների հաշվին ձեռքբերումը ֆինանսավորելու հնարավորությամբ։

Այսպիսով, «ապրանքային շուկա» («Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 19 հավելված) 2-րդ կետի 19-րդ ենթակետ) հասկացությունը՝ որպես ապրանքի շրջանառության ոլորտ, որի սահմաններում այդ ապրանքը կարող է ձեռք բերվել՝ ըստ գնորդի իրավական

դրության հատկանիշի եւ գնումը ֆինանսավորելու աղբյուրի՝ սահմանափակումներ չի պարունակում։ Ընդ որում, պատվիրատուի՝ գնումների միջոցով ապրանքի ձեռքբերումը՝ հաշվի առնելով «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 25 հավելված) 2-րդ կետի երրորդ եւ չորրորդ պարբերությունների մեջ նշված «պատվիրատու» եւ «գնումներ» հասկացությունների սահմանումները, իրականացվում է համապատասխան ապրանքային շուկայում։

11. «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 25 հավելված) 4-րդ եւ 10-րդ կետերին համապատասխան՝ մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) գնումները գնումներ կատարելու եղանակներից մեկն են եւ իրականացվում են սույն Արձանագրության 1-ին հավելվածի 10-րդ կետում նշված՝ գնման պայմանագրի գնի հաշվարկի եւ հիմնավորման մասին պահանջները հաշվի առնելով, եւ արձանագրության թիվ 3 հավելվածով նախատեսված դեպքերում։ Անդամ պետությունն իրավունք ունի գնումների մասին իր օրենսդրության մեջ կրճատելու տվյալ հավելվածով նախատեսված՝ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ցանկը (Արձանագրության 10-րդ կետի երկրորդ պարբերություն)։

Իր էությամբ՝ մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) գնման ընթացակարգը պետական (մունիցիպալ) գնում կատարելիս մատակարարի (կատարողի, կապալառուի) ընտրության եղանակ է, որի ժամանակ պատվիրատուն առաջարկում է պայմանագիր կնքել միայն իր կողմից որոշված մեկ հնարավոր մատակարարին (կատարողին, կապալառուին)։ Մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) գնում կատարելու մասին տեղեկատվությունը տեղադրելու պահանջները սահմանվում են անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ («Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության թիվ 1 հավելվածի 10-րդ կետի երկրորդ պարբերություն)։

Դատարանի մեծ կոլեգիան փաստում է, որ ապրանքի պետական

(մունիցիպալ) գնումը, այդ թվում՝ մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) գնումը առանձին ապրանքային շուկա չէ: Նաեւ Պայմանագիրը չի նախատեսում գնումների միջոցով ձեռք բերված ապրանքները հանել այն ապրանքային շուկայի ընդհանուր ծավալից, որտեղ այդ ապրանքը շրջանառվում է:

Չի պարունակում այդպիսի բացառություններ նաեւ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության նպատակով մշակված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հունվարի 30-ի թիվ 7 որոշմամբ հաստատված՝ Մրցակցային վիճակի գնահատման մեթոդիկան (այսուհետ՝ Մեթոդիկա):

Մեթոդիկայի 37-րդ կետին համապատասխան՝ ապրանքային շուկայի ծավալի եւ շուկայում տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժնի հաշվարկման հիմնական ցուցանիշը վաճառքի ծավալն է: Մեթոդիկայով նախատեսված այլ ցուցանիշներ թույլատրվում է օգտագործել այն դեպքերում, երբ անհնար է պարզել վաճառքի ծավալը, կամ երբ ապրանքային շուկայի առանձնահատկություններով պայմանավորված՝ դրանք թույլ են տալիս ավելի ճշգրիտ բնութագրել ապրանքային շուկայում տնտեսավարող սուբյեկտների դիրքը մրցակցության տեսանկյունից:

Մեթոդիկայի 39-րդ կետի համաձայն՝ պայմանավորված տեղեկատվության առկայությամբ՝ ապրանքային շուկայի ծավալը սահմանվում է որպես՝

ա) ապրանքային շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքի վաճառքի ծավալների գումար: Ընդ որում, միեւնույն ապրանքի կրկնակի հաշվառումը չի թույլատրվում,

բ) ապրանքի արտադրության ծավալների գումար ապրանքային շուկայի աշխարհագրական սահմաններում (հանած ապրանքի սպառումը դրա արտադրության ընթացքում եւ պաշարների ծավալը)՝ հանած ապրանքի արտահանման ծավալները համապատասխան տարածքից եւ գումարած ապրանքի

ներմուծման ծավալները համապատասխան տարածք,

գ) ապրանքային շուկայում գործող գնորդների կողմից ապրանքի գնման ծավալի գումար, որը նաեւ կարող է սահմանվել որպես՝

միջին առեւտրային հավելագնի մեծության նկատմամբ ճշգրտված մանրածախ ապրանքաշրջանառության ծավալ (մեծածախ շուկաների համար),

բնակչության մեկ շնչի եւ թվի հաշվով ապրանքի սպառման հիմնավորված չափաքանակի արտադրյալ (օրինակ՝ մեծ թվով գնորդներով մանրածախ ապրանքային շուկաների համար)՝ ճշգրտելով, անհրաժեշտության դեպքում՝ սպառման չափաքանակին հասնելու փաստացի մակարդակը։

Այսպիսով, Պայմանագրի դրույթների զարգացման նպատակով Մեթոդիկան պարտադրում է ուսումնասիրվող ապրանքային շուկայի ծավալի մեջ հաշվի առնել ապրանքի վաճառքի/գնման ամբողջ ծավալը՝ անկախ դրա ձեռքբերման եղանակներից։

Բացի այդ՝ Դատարանի մեծ կոլեգիան՝ ապրանքային շուկայում մրցակցության վիճակը գնահատելիս, պետական եւ համայնքային կարիքների համար ապրանքի մատակարարների մրցութային ընտրության պայմանների ուսումնասիրության անհրաժեշտությունը նշում է որպես ապրանքային շուկա մուտք գործելու վարչարարական սահմանափակում (խոչընդոտ), ինչը նախատեսված է Մեթոդիկայի 43-րդ եւ 44-րդ կետերով։ Նման չափանիշի սահմանմամբ նաեւ հաստատվում է այն թեզիսը, որ ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության եղանակը այդ շուկան գնահատելիս չի սահմանափակում մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների կիրառումը։

Ըստ Դատարանի մեծ կոլեգիայի՝ պետական (մունիցիպալ) գնումների միջոցով ձեռք բերվող ապրանքը կոնկրետ ապրանքային շուկայի ընդհանուր ծավալից հանելը կհանգեցնի այդ ապրանքային շուկայում մրցակցության գնահատման խեղաթյուրմանը։

12. Շարադրվածի հիման՝ Դատարանի մեծ կոլեգիան հանգում է այն եզրակացության, որ Պայմանագրի նորմերի կիրառման նպատակով ապրանքային շուկա ասելով պետք է հասկանալ ապրանքի շրջանառության ոլորտը, իսկ պետական (մունիցիպալ) գնումները՝ ներառյալ մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) իրականացվող գնումները՝ որպես դրանց անցկացման առանձին եղանակ, այդ ապրանքային շուկայի շրջանակներում ապրանքի ձեռքբերման եղանակներից մեկն է։ Ընդ որում, անհրաժեշտ է հատուկ նշել, որ ապրանքային շուկայի վիճակը եւ այնտեղ ձեւավորված պայմանները նաեւ համապատասխան ապրանքի շրջանառության պայմաններ են ստեղծում, ինչը, իր հերթին, կարող է ազդել այդ ապրանքային շուկայում կատարվող պետական (մունիցիպալ) գնումների վրա։

Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված արգելքի խախտումը կանխելու հարցերով՝ Հանձնաժողովի լիազորությունների մասին

13. Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսվում է, որ Հանձնաժողովը, «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրությամբ (Պայմանագրի թիվ 19 հավելվածով) նախատեսված կարգով, կանխում է անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների), ինչպես նաեւ անդամ պետությունների՝ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց եւ ոչ առեւտրային կազմակերպությունների կողմից Պայմանագրի XVIII բաժնով սահմանված մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները, եթե այդպիսի խախտումներն ունեն կամ կարող են ունենալ բացասական ազդեցություն երկու կամ ավելի անդամ պետությունների տարածքներում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա՝ բացառությամբ ֆինանսական շուկաների։

Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետով արգելվում է գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) կողմից այնպիսի

գործողությունների (անգործության) իրականացումը, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել մրցակցությունը արգելելուն, սահմանափակելուն, վերացնելուն եւ (կամ) այլ անձանց շահերը ոտնահարելուն։ Նորմում ներկայացված է տնտեսավարող սուբյեկտի այդ գործողությունների (անգործության) բաց ցանկը, այդ թվում՝ ապրանքի բարձր կամ ցածր մենաշնորհային գին սահմանելու կամ պահպանելու (1-ին ենթակետ) արգելքը։

Ընդ որում, տնտեսավարող սուբյեկտ (շուկայում գործող սուբյեկտ) ասելով՝ պետք է հասկանալ առեւտրային կազմակերպություն, ոչ առեւտրային կազմակերպություն, որն իրականացնում է իրեն եկամուտ բերող գործունեություն, անհատ ձեռնարկատեր, ինչպես նաեւ ֆիզիկական անձ, որի եկամուտ բերող մասնագիտական գործունեությունը, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ենթակա է պետական գրանցման եւ (կամ) լիցենզավորման («Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության 2-րդ կետի 20-րդ ենթակետ)։

«Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության 2-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն, գերիշխող դիրք պետք է համարել որեւէ ապրանքի շուկայում տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) դիրքը, որը նրան հնարավորություն է տալիս համապատասխան ապրանքային շուկայում որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա եւ (կամ) այդ ապրանքային շուկայից դուրս մղելու այլ տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) եւ (կամ) խոչընդոտելու այդ ապրանքային շուկայի հասանելիությունն այլ տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) համար։

Հաշվի առնելով դիմումատուի հարցի բառացի ձեւակերպումը՝ Դատարանի մեծ կոլեգիան անհրաժեշտ է համարում նշել, որ հաշվի առնելով Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետով եւ «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության դրույթներով սահմանված՝ Հանձնաժողովի

իրավասությունը Հանձնաժողովի լիազորություններն ուղղված են շուկայում գործող վերոնշյալ սուբյեկտների արգելված վարքագծի փաստերը պարզելուն եւ կանխելուն՝ ներառյալ ապրանքի բարձր կամ ցածր մենաշնորհային գին սահմանելը կամ ապահովելը։

Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների սահմանման նպատակներով բարձր մենաշնորհային գին է համարվում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի կողմից սահմանված գինը, եթե այդ գինը գերազանցում է նման ապրանքի արտադրության եւ իրացման համար անհրաժեշտ ծախսերի ու եկամտի գումարը եւ այն գինը, որը ձեւավորվել է այնպիսի ապրանքային շուկայում մրցակցության պայմաններում, որը համադրելի է՝ ըստ ապրանքի գնորդների կամ վաճառողների կազմի, ապրանքի շրջանառության պայմանների, ապրանքային շուկայի հասանելիության պայմանների, պետական կարգավորման, այդ թվում՝ հարկման ու մաքսասակագնային կարգավորման՝ Միության տարածքում կամ դրա սահմաններից դուրս նման շուկայի առկայության դեպքում («Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության 2-րդ կետի 12-րդ ենթակետ)։

Մենաշնորհային ցածր գին ասելով պետք է հասկանալ՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) կողմից սահմանված գին, եթե այդ գինը ցածր է նման ապրանքի արտադրության եւ իրացման համար փաստացի կամ անհրաժեշտ ծախսերի ու եկամտի գումարից եւ այն գնից, որը ձեւավորվել է համադրելի ապրանքային շուկայում մրցակցության պայմաններում՝ Միության տարածքում կամ դրա սահմաններից դուրս նման շուկայի առկայության դեպքում («Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության 2-րդ կետի 13-րդ ենթակետ)։

Նաեւ Դատարանի մեծ կոլեգիան ուշադրություն է դարձնում, որ Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետով արգելված՝ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսավարող սուբյեկտի վարքագծի արդյունքը, որը ձեւավորում է խախտման օբյեկտիվ կողմը, պետք է լինի բացասական հետեւանքներ առաջանալու

հնարավորությունը՝ մրցակցության արգելում, սահմանափակում, վերացում եւ (կամ) այլ անձանց շահերի ոտնահարում: Ընդ որում, շուկայի այդ սուբյեկտի կողմից չարաշահումը կարող է արտահայտվել այդ թվում՝ մենաշնորհային գների ձեւավորման, սահմանման (ապահովման) ձեւով:

14. Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ Հանձնաժողովն իր լիազորությունները պետք է իրականացնի իրավասության շրջանակներում, ինչպես նաեւ պահպանելով Միության իրավունքով սահմանված պայմաններն ու կարգը:

Ի կատարումն Պայմանագրի 74-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Միության անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) կողմից մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխման հարցերով՝ Հանձնաժողովի իրավասությունը սահմանելու նպատակով, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 29 որոշմամբ սահմանվել են շուկան անդրսահմանային համարելու չափորոշիչները (այսուհետ՝ Չափորոշիչներ):

Անդրսահմանային շուկայի որոշման ընդհանուր կանոնը, որը կիրառվում է Պայմանագրի 76-րդ հոդվածով նախատեսված բոլոր խախտումների նկատմամբ, ամրագրված է Պայմանագրի 74-րդ հոդվածի 2-րդ կետում եւ նշված Չափորոշիչների 2-րդ կետում: Այն հիմնված է աշխարհագրական մոտեցման վրա եւ շուկան անդրսահմանային է համարում, եթե ապրանքային շուկայի աշխարհագրական սահմաններն ընդգրկում են երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներ:

Բացի այդ,՝Չափորոշիչների 5-րդ կետը պարունակում է Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից թույլ տրված արգելքների խախտումները Հանձնաժողովի կողմից կանխվելու համար անհրաժեշտ հատուկ պայմանների ցանկը:

Ընդ որում, Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Պայմանագրի եւ դրա հավելվածների դրույթները չեն սահմանափակում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ Պայմանագրով ընդգրկվող բոլոր անդրսահմանային շուկաներում վերահսկողության հարցերով Հանձնաժողովի

լիազորությունները՝ ելնելով ապրանքի ձեռքբերման եղանակից, այդ թվում՝ նաեւ այն դեպքերում, երբ ապրանքը ձեռք է բերվում գնումների ընթացակարգերի միջոցով (ներառյալ մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից գնումները), քանի որ չի բացառվում գերիշխող դիրք զբաղեցնող շուկայում գործող սուբյեկտի գործողությունների (անգործության) ազդեցության հնարավորությունն ապրանքի շրջանառության պայմանների վրա։

Տվյալ եզրակացությունը համապատասխանում է նաեւ Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետի կիրառման վերաբերյալ Դատարանի պրակտիկայում նախկինում ձեւավորված իրավական դիրքորոշմանը (*Դելռուս* I թիվ C-3/19 գործի վերաբերյալ Դատարանի կոլեգիայի 2020 թվականի փետրվարի 11-ի որոշման 6.1 կետ), համաձայն որի, Պայմանագրի XVIII բաժնի եւ «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության դրույթների գործողության շրջանակը տարածվում է բոլոր հարաբերությունների վրա, որոնք ունեն կամ կարող են ունենալ բացասական ազդեցություն ԵԱՏՄ շրջանակներում մրցակցության, տնտեսական գործունեության բոլոր տեսակների վրա։ Այն սահմանափակված է միայն Պայմանագրի XVIII բաժնի եւ Արձանագրության համապատասխան դրույթներում ուղղակի նշված ոլորտներով (օրինակ՝ ֆինանսական շուկաներ)։

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաեւ այն, որ կոնկրետ ապրանքների պետական (մունիցիպալ) գնումներն առանձին ապրանքային շուկաներ չեն, Դատարանի մեծ կոլեգիան հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովն օժտված է այդ ապրանքների շրջանառության հենց ապրանքային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները կանխելու լիազորություններով, որտեղ էլ, գնումների ընթացակարգերի միջոցով, ձեռք են բերվում ապրանքները (այդ թվում՝ գերիշխող դիրք զբաղեցնող շուկայում գործող սուբյեկտի կողմից թույլ տրված խախտումները կանխելու, բարձր կամ ցածր մենաշնորհային գնի սահմանումը, պահպանումն արգելելու լիազորություններով)։ Ըստ Դատարանի մեծ կոլեգիայի՝ այլ դեպքում հնարավոր չէր լինի պահպանել շուկայական տնտեսության եւ բարեխիղճ մրցակցության սկզբունքները, որոնք Պայմանագրի մասնակից պետությունները դրել են Միության գործունեության

հիմքում։

Ինչ վերաբերում է հենց գնումների ընթացակարգերում խախտումներին, որտեղ իրավահարաբերությունների կարգավորումը սահմանվում է անդամ պետության օրենսդրությամբ, ապա՝ հաշվի առնելով Պայմանագրի 88-րդ հոդվածի 1-ին կետի եւ «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության դրույթները, դրանց կանխումը վերապահված է տվյալ ոլորտում լիազորված՝ Միության անդամ պետության իշխանության մարմինների իրավասությանը։

15. Բացի այդ՝ Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթների համաձայն, Հանձնաժողովը պետք է պահպանի մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխման կարգը, որը նախատեսված է «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրությամբ, որի 11-րդ կետին համապատասխան, հաստատվել են դիմումների ուսումնասիրության կարգը, քննության անցկացման կարգը, գործերի ուսումնասիրության կարգը, այլ ընթացակարգային եւ մեթոդաբանական փաստաթղթեր։

Մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխման սահմանված կարգի խստագույնս պահպանումը Հանձնաժողովի կողմից՝ Միության մրցակցային (հակամենաշնորհային) իրավունքի ոլորտում վերահսկողական գործառույթներ իրականացնելու իրավաչափության կարեւոր եւ անհրաժեշտ պայման է։

Հանձնաժողովի կողմից անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների կոնկրետ խախտումների հայտնաբերման առնչությամբ Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Հանձնաժողովի՝ այդ դեպքերում կայացված որոշումների իրավաչափությունը կարող է ստուգվել դատական կարգով (Դատարանի ստատուտի 39-րդ կետի 2-րդ ենթակետ, «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության 14-րդ կետ)։

16. Դատարանի մեծ կոլեգիան վերոշարադրյալի հիման վրա եզրահանգում է՝

16.1. Պետական (մունիցիպալ) գնումները՝ անկախ դրանց կատարման

եղանակից, առանձին ապրանքային շուկա չեն, բայց համապատասխան անդրսահմանային ապրանքային շուկայում ապրանքի (աշխատանքի, ծառայության) ձեռքբերման եղանակ են, որի վրա տարածվում են մրցակցության ընդհանուր սկզբունքները եւ կանոնները։

16.2. Հանձնաժողովը, Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթներին համապատասխան, օժտված է՝ գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսավարող սուբյեկտի կողմից անդրսահմանային ապրանքային շուկաներում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) բարձր կամ ցածր մենաշնորհային գնի սահմանման, պահպանման փաստերը կանխելու լիազորություններով՝ անկախ այդ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերման եղանակից։

Հանձնաժողովն անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխումն իրականացնում է՝ յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով բոլոր հանգամանքները՝ «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրությամբ նախատեսված կարգով (Պայմանագրի թիվ 19 հավելված)։ Եթե տնտեսավարող սուբյեկտը համաձայն չէ Հանձնաժողովի կոնկրետ որոշմանը, ապա այն կարող է բողոքարկվել Եվրասիական տնտեսական միության դատարան։

III. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմումատուին։

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում։

Նախագահող՝ Ա.Ա. Դրոնով

Դատավորներ՝ Ա.Մ. Աժիբրահիմովա

Է.Վ. Հայրիյան

Դ.Պ. Ալեքսանդրով

Ա.Ա. Զաբարա

Ե.Ժ. Իսմայիլով

Մ.Տ. Կայիպով

Ա.Բ. Կիշկեմբաեւ

Ն.Վ. Պավլովա

Ա.Գ. Թունյան